26 մարտի 2015 թվականի N 293 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 1797-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Հանրային ծառայության առանձին տեսակների դասային աստիճանների (կոչումների) համապատասխանությունը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1797-Ն որոշման հավելվածի «Հատուկ քննչական ծառայության դասային աստիճաններ» այունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում շնորհվող կոչումներ
արդարադատության գեներալ-լեյտենանտ
արդարադատության գեներալ-մայոր
արդարադատության գնդապետ

արդարադատության փոխգնդապետ
արդարադատության մայոր
արդարադատության կապիտան
արդարադատության ավագ լեյտենանտ
արդարադատության լեյտենանտ

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ